լինելու և նոցա արած անկարգութեանց մասին. այդ լուրը չափազանց համարելով խոնարհաբար խնդրում եմ, պ. խմբագիր, բարեհաճէք տպել հետեւեալը։

Շարուր-Դարալակեազու գաւառում ոչ մի օրինակ չէ եղել որ աւազակները գութանի տակից գոմէշ կամ եզ խլեն և փախցնեն Պարսկաստան. այլ յուլիս ամսում անյայտ աւազակներ գողացել էին չորս գոմէշ. գաւառական պահապան ձիաւորները գիշերվայ շրջելու ժամանակ պատահելով նրանց յետ են խլում գողացած գոմէշները։ Արդեօք այդ աւազակները քուրդեր էին, թէ Թուրքեր յայտնի չէ, որովհետև Թուրք աւազակներն էլ գողութիւն գնալու միջոցին, իրանց քուրդ ձեւացնելու համար, քուրդի գլխարկ են ծածկում։ Թէև պատահել է մարդասպանութիւն, բայց ոչ թէ գողութեան (կողոպտելու) նպատակաւ, այլ թշնամութիւնից։ Բաշնորաշէնի կայարանից գիշերը ձիաւորների, (համշչիկների) քնած ժամանակը գողեր են փախցնում հինգ ձի, որոնցից երկուսին, մի և նոյն գիշերը ձիավարները ձերբակալում են դաշտում, իսկ մնացած երեք ձիաները անյայտ մարդիկ դաշտից գողանում անց են կացնում Երասխով Պարսկաստան. մի քանի օրից յետ այդ ձիաները, համաձայն պ. գաւառապետի նամակին, Մաքուայ խանը իր սահմանում գտնում է և վերադարձնում տիրոջը։

Այս տեղեկութիւններս ճշտիւ ինձ յայտնի են, ինչպէս գործավար պօլիցիական կառավարութեան։

Յովհաննէս Տէր-Յովհաննէսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 13 օգոստոսի

Շատ տեղերից դիմումեն ինձ հարցնելով սոլիտերի դէմ (տափակ մանր ճիճու) իմ պատրաստած դեղի գինը, որի համար պէտք է իւրաքանչիւրի հետ առանձին Թղթակցել, ուստի լրագրի միջոցաւ յայտնում եմ ով որ կամենում է այդ դեղը ինձանից ստանալ, մէկ տարեկանից մինչ տասն և երկու տարեկան հասակի համար, պէտք է ուղարկի վեց րուբլի, իսկ նրանից վերի համար տասն և մէկ րուբլ. փոստի ծախքը ինձանից. և նմանապէս գրել տարիքը և ինչ սեռի համար է։ Չքաւորները ապացուցաթղթով կուղարկեն կէս գինը. իսկ Թիֆլիսի մէջ ընդունողները հինգ րուբլի և տաս րուբլի. չքաւորները նմանապէս կը վճարեն կէս գինը։

Իմ հասցէն. Въ г. Тифлисъ. Мартиросу Ахназарянцу, Сололакская улица, магазинъ Варшавская Пекарня.

Մ. Հախնազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չորեքշաբթի օր, օգոստոսի 12-ին, երեկոյեան $11^1/_2$ ժամին ԹԻՖԼԻՍՈՒՄ զգալի եղաւ երկրաշարժի մի հարուած։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ պ. Բ. Պիճիկեանց, ընթերցարանի հիմնադիր անդամների վարչութեան կողմից շնորհակալութիւն է յայտնում այն երիտասարդներին, որոնք Թիֆլիսում աշակերտներ լինելով, ամառվայ արձակուրդներին Ախալքալաքում ներկայացում տուեցին յօգուտ դպրոցին կից ընթերցարանի և ստացած արդիւնքով բերել տուեցին 52 օրինակ ընթերցանութեան գրքեր։

Մենք ստացանք ՕՐԴՈՒԲԱԴԻՑ բազմաթիւ ստորագրութիւններով մի վկայական, որով ստորագրեալները հերքում են այն լուրը որ Ս. Ստեփաննոս եկեղեցու գանձապետ Յովսէփ Տէր-Պետրոսեանց իրան օգնական ընտրած լինի մի Թուրք, ինչպէս որ տպված էր «Մշակի» № 116 մէջ։ Ստորագրեալները հաստատում են որ մեր լրագրի վերև յիշված լուրը կատարելապէս անհիմն է.

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են հետեւեալ լուրերը։ «Տեղիս յաջորդը գնաց Ագուլիս և շրջակայ գիւղերը այցելութիւն անելու։ Մեր ուսումնարանը այնքան վատ է գնում, որ շատերը վախենում են թէ շուտով կը փակվի։ Հոգաբարձուներից միայն երկուսն են գտնվում քաղաքում, բայց մինի վրա կարելի է միայն յոյս դնել։ Հարկաւոր է անպատճառ Թեմական տեսչի ներկայութիւնը։ Այստեղի մի քանի երիտասարդներ մտադիր են շուտով Թատրօնական ներկայացումներ տալ։ Խորհուրդ ենք տալիս նրանց չը խառնել իրանց գործի մէջ դպրոցի հոգաբարձուներին։ Եղանակները շատ շոգ են անում. մթերքները բաւական առատ են և էժան են վաճառվում»

Մեզ գրում են որ Հին-Նախիջևանի գաւառի Թմբուլ գիւղում նորերումս այրվեցին մի քանի կալեր։ Ասում են հրդեհ գցողը, ի հարկէ անգիտակցական կերպով, եղել է մի 7 տարեկան տղայ, աղանձ անելիս։

Երևանից մեզ որպէս հաստատ լուր են հաղորդում որ Սեդրակ Մանդինեան ընդունված է արդէն որպէս Էջմիածնի ճեմարանի պրօֆէսօր։

ՍՈՒՐԱՄԻՑ մեզ հեռագրում են, որ օգոստոսի 12-ին, գիշերվայ $11^1/_2$ ժամին, զգալի եղաւ երկրաշարժի զօրեղ հարուած։ Երկրաշարժի հոսանքը անցաւ արևմուտքից արևելք և տևեց 36 վայրկեան։ Ոտների վրա կանգնել անհնարին էր։ Ուրեմն Սուրամում երկրաշարժը նոյն ժամանակ է պատահել, ինչպէս և Թիֆլիսում, բայց երևում է թէ այնտեղ անհամեմատ աւելի զօրեղ էր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

„Մասիս“ լրագրում կարդում ենք հետեւեալը։

Փարիզ հրատարակեալ „Ամերիքան Րըջիստըր“ ամերիկեան թերթն յունիս 16 թուով թղթակցութիւն մը կը հրատարակէ Կ. Պօլսէն, յորում ամերիկացի թղթակիցը լորդ Դիւֆըրինի Կ. Պօլիս գալն յիշելով, Բերլինի դաշնագրին 61-որդ յօդուածին վրա կը խօսի և այս առթիւ համակրական խօսքեր կընէ հայոց ազգին և Հայաստանի նկատմամբ։ Թղթակիցը Թիւրքաց հայոց ազգային սահմանադրութեան հանդիսին վրա ալ կը խօսի և կը Թուի թէ սահմանադրութիւնն և նրա հանդէսը լաւ տպաւորութիւն ըրած են նորա վրա։ «Արմէնիա կարևոր է Ամերիկայի համար» կըսէ յիշեալ բարեսիրտ թղթակիցն։ Ահա գաղափար մը, զոր առաջին անգամ կը լսենք։

«Բայտերի գործակալութեանը» հեռագրում են են Կ. Պօլսից հետեւեալը։

Լօրդ Դըֆըրին արդէն մի քանի քայլ արաւ սուլթանին համոզելու համար թէ որքան անհրաժեշտ է մտցնել րէֆօրմներ Հայաստանի մէջ։ Բայց բացակայութիւնը Կ. Պօլսից Ֆրանսիական, ռուսաց և գերմանական դեսպանների, ռամազանի տօնի մօտենալը և այն հանգամանքը որ յունաց և չէրնոգօրիական խնդիրները դեռ ևս կատարելապէս վճռված չեն, պատճառ էին որ լօրդի պահանջները դեռ ևս ոչինչ ազդեցութիւն չունեցան։ Ասում են որ անգլիական դեսպանը համոզում է սուլթանին իր սեփական կամքով մտցնել րէֆօրմներ Հայաստանի քրիստոնեայ և մահմետական բնակիչների համար և դրանով առաջն առնել օտար դեսպանների որ և է ճնշմանը։ Լօրդ Դըֆըրին, ինչպէս լսվում է, խորհուրդ է տուել նորին մեծութեանը ուղարկել Հայաստան իր ամենաընդունակ հպատակներից մինին, տալով նրան իրաւունք արձակել անընդունակ պաշտօնեաներին և ձեռնամուխ լինել րէֆօրմների իրագործման, որովհետև այդ միջոցով կարելի է առաջն առնել օտար պետութիւնների ներկայացուցիչների միջամտութեանը։

«Новая Газета» լրագրին Լօնդօնից հեռագրում են։

Համայնքների ժողովի նիստի ժամանակ Չարլս Դիլկ, պատասխանելով Բրայդին, ասեց. «Ցաւում եմ որ մինչև այժմ ոչ մի քայլ արած չէ Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը իրագործելու համար։ Լօրդ Դըֆըրին այդ մասին առաջարկութիւններ արաւ սուլթանին և Թիւրքաց առաջին մինիստրին. նրանք երկուսն էլ, ըստ երևոյթի, հասկանում են գործերի դրութեան ծանրակշիռ լինելը։ Լօրդ Դըֆըրին հաստատապէս պնդում էր նրանց մօտ, որ նրանք, մինչև որ չը մշակվի րէֆօրմների մշտական ծրագիրը, անյապաղ միջոցներ ձեռք առնէին հեռացնելու ամենամեծ չարիքները, նշանակելով Հայաստանում մի ընդունակ վարչութիւն, որին տրված լինէին բաւական իրաւունքներ։ Դեսպաններից մի քանիսների Կ. Պօլսից բացակայութիւնը, նոյնպէս գործերի ընդմիջելը ռամազանի տօնի մօտենալու պատճառով, արգելք էին լինում մինչև այժմ պետութեանց ներկայացուցիչների համաձայն գործողութեանը Արմէնիայի մէջ մտցնվելի րէֆօրմների վերաբերութեամբ։ Լօրդ Դըֆըրին կատարելապէս ըմբռնած է որքան մեծ նշանակութիւն է տալիս այդ խնդրին անգլիական կառավարութիւնը և անգլիական ազգը. նա յայտնեց, որ չի խնայի իր աշխատանքները և ձեռքից չի Թողնի ոչ մի առիթ այդ խնդրի լուծմանը նպաստելու համար»

ՖՐԱՆՍԻԱ

Անցեալներում Ֆրանսիայի մէջ տեղի ունեցաւ մի անցք, որ որքան նշանաւոր էր, նոյնքան էլ անսպասելի։ Ֆրանսիական մինիստրութեան նախագահ Ժիւլ Ֆերրի օգոստոսի 11-ին Նանսիի մէջ մի ճառ արտասանեց, որով մեկնեց, թէ անհրաժեշտ է Ֆրանսիական սահմանադրութեան վերաքննութիւնը այն ձևով, որ պահանջեց Գամբետտա Տուրի մէջ արտասանած իր ճառով։ Օգուտ քաղելով այդ դէպքից, Ժիւլ Ֆերրի անուանեց Գամբետտային „երևելի հրապարակախօս“։ Նոյն մինիստրը, որ մերժում էր սահմանադրութեան վերաքննութիւնը, այժմ յայտնում է, որ Գամբետտայից մտադրված սենատի փոփոխութիւնը օգտակար նախազգուշութիւն կը լինի սահմանադրութեան համար և ոչ թէ վտանգաւոր։

Գամբետտա էլ իր կողմից, կարծես պատասխանելով Ժիւլ Ֆերրիի ճառին, արտասանեց Բէլվիլլի մէջ մի նոր ճառ, որ հանրապետական լրագիրներից մինչ այն աստիճան խաղաղասէր և չափաւոր է համարվում, որ նրանք ենթադրում են, թէ Գամբետտա կարող է ընդունել ապագայ նոր մինիստրութեան նախագահութիւնը։

Այդ անցքից կարելի է եզրակացնել, որ քաղաքական այդ երկու հակառակորդները կատարելապէս հաշտվել են։ Ժիւլ Ֆերրի անպաշտպան թողեց սենատի այժմեան մեծամասնութիւնը, որը մերժեց Գամբետտայի ընտրողական օրինագիծը, իսկ Գամբետտա իր կողմից մի քանի աննշան զիջումներ արաւ։

Այս բոլորը ճշմարիտ է անսպասելի էր, բայց մի և նոյն ժամանակ շատ հասկանալի։ Երբ Ժիւլ Ֆերրի Նանսիի մէջ արտասանում էր իր ճառը, միայն տասն օր էր մընացել մինչև ընտրութիւնները։ Մինչև այդ օրը Ֆերրի բաւական ժամանակ ունէր իմանալու համար, թէ որքան կաջողվեն Գամբետտայի հակառակորդների ջանքերը և համոզվեցաւ, որ յաղթութիւնը Գամբետտային կը մնայ։ Ժիւլ Ֆերրի չէ պատկառնում քաղաքական այն գործիչներին, որ ընդունակ են գաղափարին զոհ գնալ։ Նախատեսելով իր անկման անհրաժեշտութիւնը Ժիւլ Ֆերրի անցաւ Գամբետտայի կողմը, ՚ի նկատի ունենալով, որ նա կամ կը մնայ մինիստրութեան նախագահ, կամ եթէ կը կազմվի Գամբետտայի մինիստրութիւնը, այն ժամանակ նա կը ստանայ դեսպանի պաշտօնը Լօնդօնում, որովհետև այժմեան դեսպան Շալմել-Լակուր Գամբետտայի մինիստրութեան մէջ արտաքին գործերի մինիստրի պաշտօնը կը ստանայ։

Ինչ որ լինի Ֆերրիի կարծիքների փոփոխութեան պատճառը, ինքն այդ իրողութիւնը ապացուցանում է, թէ քաղաքականապէս Գամբետտա մինչև որ աստիճան ուժեղ է։ Նրա կամքի առաջ խոնարհվում են ամենքը և ամեն բան։ Դրանից երևում է, որ Գամբետտայի հեղինակութեան և նշանակութեան անկման մասին մինչև այժմ ասածները անիրաւացի են եղել։ Գամբետտա կարող է չը նախագահել ապագայ մինիստրութեանը, բայց կառավարութիւնը այնու ամենայնիւ ենթարկված կը լինի նրա անմիջական ազդեցութեանը։

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալը իրլանդական կալուածական նոր օրէնքի մասին։ Մի քանի օր առաջ հիմնվելով հեռագրական կարճ հաղորդութիւնների վրա, կարելի էր իրլանդական կալուածական վերանորոգութեան հարցը վերջնականապէս վճռված համարել։ Վերջին հաղորդութեան մէջ ասված էր, թէ „լօրդերի ժողովը ընդունեց իրլանդական կալուածական օրինագիծը երրորդ ընթերցանութիւնից յետոյ առանց քուէարկութեան։“ Լօրդերի առաջարկած խմբագրութիւնները այնքան աննշան էին, որ նրանցից անկարելի էր ենթադրել օրինագծի անաջողութիւնը։ Դուքս Արգայլի և մարկիզ Սալիսբիւրիի առաջարկած նշանաւոր խմբագրութիւնները կարող էին մերժվել համայնքների ժողովից, որի երկրորդ վճիռը կը ստիպէր լօրդերի ժողովին պահանջած զիջումներն անել։ Մինչև այժմ շատ քիչ է պատահել, որ լօրդերի ժողովը հրաժարվէր հաստատել մի օրէնք, որ ընդունված էր համայնքների ժողովից և որ պահանջում էր երկրի հասարակական կարծիքը։ Բայց այս անգամ Անգլիայի մէջ անսպասելի անցք պատահեցաւ, մանաւանդ որ իրլանդացիք չափազանց գրգռված էին և անգլիացիները անհրաժեշտ էին համարում Գլադստոնի առաջարկած վերանորոգութիւնը։

Լօրդերի ժողովը կալուածական օրէնքի մէջ այնպիսի փոփոխութիւններ մտցրեց, որոնք նոր օրէնքը ձեռնտու են դարձնում կալուածատէրերի համար և վնասակար իրլանդացի ֆերմերների համար. կապալի իրաւունքի ծախելը չափազանց սահմանափակված է և կալուածատէրերին իրաւունք է տրված նշանաւոր գումար վերցնել այն փողից, որ կարող է ստանալ ֆերմերը կապալի իրաւունքը ծախելու ժամանակ։ Իրլանդիայի „կալուածական դատարանի“ միջոցները և իրաւասութեան շրջանը նոյնպէս սահմանափակված է լօրդերի ժողովից և բացի այդ ընդարձակված են կալուածատէրերի իրաւունքները այդ դատարանի վերաբերութեամբ։ Այս նշանաւոր փոփոխութիւնները հաղորդված չէին և այդ պատճառով կարելի էր ենթադրել, թէ լօրդերի կալուածական օրէնքը ընդունվեցաւ լօրդերի ժողովից։ Բայց իսկապէս այն ինչ որ ընդունված և հաստատած էր համայնքների ժողովի մէջ, ժողովից, ոչնչացաւ լօրդերի ժողովի մէջ,